

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**29 նոյեմբերի 2018թ.
ք.Երևան**

N 158-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԻՆՔՆԱՔԱՑԱՐԿ
ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՎԱՂԱՐՇԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Սասնա Ծոներ» համահայկական կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Վաղարշակ Վաչագանի Գասպարյանը 2018 թվականի նոյեմբերի 29-ին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում՝ առանց նոտարական վավերացման:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

Պատգամավորի թեկնածուի կողմից ինքնաբացարկի մասին դիմում ներկայացվելու դեպքում թեկնածուն հանվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և համապետական, և տարածքային ընտրական ցուցակներից:»:

2018 թվականի նոյեմբերի 29-ին «Սասնա Ծոներ» համահայկական կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Վաղարշակ Վաչագանի Գասպարյանին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.11.2018թ. նիստի մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատշաճ ծանուցել է, դիմումատուին ներկայացվել են իրավակարգավորումները, որոնց համաձայն առանց նոտարական վավերացման դիմում ներկայացնելու դեպքում նա պարտավոր է ներկայանալ նիստին և հաստատել իր դիմումը, միաժամանակ նշվել են նաև նիստին չներկայանալու և դիմումը չհաստատելու իրավական հետևանքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.11.2018թ. նիստին թեկնածու Վաղարշակ Գասպարյանը չի ներկայացել:

Վերոգրյալը հիմք ընդունելով, հաշվի առնելով, որ ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու վերջնաժամկետը 2018 թվականի նոյեմբերի 29-ի ժամը 18:00-ն է և այն արդեն սպառվել է, ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ընտրությունների «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ընտրական ցուցակում (91-րդ հերթական համար) և թիվ 10 ընտրական տարածքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Վաղարշակ Վաչագանի Գասպարյանի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան